ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2014թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի «Հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու մասին» N 588-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել սև ցելի տակ թողնված տարածքների մակերեսների ճշտման և մշակության ու խնամքի ընթացքի վերահսկման կարգը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի _____-ի
N _____-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2009 թվականի սեպտեմբերի 18-ի
N 588-Ն որոշման

ԿԱՐԳ
ՍԵՎ ՑԵԼԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սև ցելի մշակության և խնամքի համար հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) սև ցելի մշակություն և խնամք՝ հողատարածքների խոզանի երեսվար, խոր վարը (ցրտահերկ) և ցելադաշտի գարնանային ու ամառային խնամքի աշխատանքներ: Խոր վարը կատարվում է ուշ աշնան կամ ձմեռային ամիսներին: Գարնանը, առաջին իսկ հնարավորության դեպքում, հողում խոնավությունը պահպանելու համար, անհրաժեշտ է հողը փոցխել, որից հետո 20 - 25 օրվա ընթացքում ծլած մոլախոտերը ոչնչացնելու համար կատարել կուլտիվացիա 10 – 12 սանտիմետր խորության վրա: Կախված բնակլիմայական պայմաններից, այս աշխատանքները պետք է կատարել 20 - 25 օրը մեկ անգամ, աստիճանաբար պակասեցնելով փոցխումների խորությունը, հասցնելով՝ նախացանքային մշակումը 6 - 8 սանտիմետր, իսկ չորային պայմաններում՝ 5 - 6 սանտիմետր.

2) պետական աջակցություն՝ սև ցելի մշակության և խնամքի համար ծախսված գումարի մասնակի փոխհատուցում.

3) սև ցելի մշակության և խնամքի համար պետական աջակցության մասնակից՝ միջոցառման իրականացման գործընթացում ներգրավված պետական և տարածքային կառավարման մարմինները:

II. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Միջոցառման իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում գործընթացի նկատմամբ.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ յուրաքանչյուր տարի մարտի 1-ին և հուլիսի 1-ին, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով համայնքը և սև ցելի տակ մշակված տարածքների մակերեսները:

4. Միջոցառման իրականացման գործընթացում ներգրավված տարածքային կառավարման մարմինները, շրջանի վարչակազմի սահմանած ժամկետներում, հիմք ընդունելով հողօգտագործողների վարելահողերի սև ցելի մշակության և խնամքի մասին դիմումները, անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականների (վկայականի բացակայության և անհատույց կամ մշտական օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի վրա սև ցել կատարելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից տրվում է համապատասխան տեղեկանք) և անձնագրերի պատճենները, շրջանի վարչակազմ են ներկայացնում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականի համարը և սև ցելի տակ դրված տարածքի մակերեսը:

5. Պետական աջակցություն տրամադրվում է համայնքի վարչական սահմաններում սեփականության ու վարձակալության (ոչ ավելի քան 25 հեկտար) և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի համար՝ 1 հեկտարի դիմաց 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

6. Նախարարությունը, ըստ շրջանների, սահմանում է սև ցելի տակ մշակվող տարածքների մակերեսները՝ սև ցել իրականացնողներին պետական աջակցություն տրամադրելու նպատակով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցների շրջանակներում:

7. Պետական աջակցությունը տրամադրվում է միանվագ, յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսում:

8. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկությունները, իրականացնում է սույն կարգի 5-րդ կետում նշված պետական աջակցության տրամադրումը՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցներից:»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Hin dzev

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 588-Ն որոշմամբ սև ցել իրականացնող հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրումը նախատեսված էր սեփականության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի համար: Ուստի, առաջացել է նաև վարձակալության իրավունքով հատկացված վարելահողերի բերրիության բարձրացման և աշնանացան կատարելու համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Որոշման նախագծի խնդիրը վարելահողերի բերրիության բարձրացման և աշնանացան կատարելու համար բարենպաստ պայմանների ստեղծումն է:

Նպատակը և բնույթը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հողօգտագործողների կողմից սև ցելի մշակության և խնամքի համար ծախսված գումարի մասնակի փոխհատուցումն է պետության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Ներկայացված որոշման նախագծից ակնկալվում է վարելահողերի բերրիության բարձրացման և աշնանացան կատարելու համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ ցանքատարածությունների և համախառն բերքի ծավալների ավելացում, գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացում, տնտեսական աճի ապահովում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: Նախագծի ծախսերը կնախատեսվեն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջաններ

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին և իրավաբանական բաժին

_____ **Վ. Ավետիսյան**
(ստորագրությունը)

«_____» _____ 2014թ.